



0084, Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060-38-00-01

0084, Z. Andranik st.1, Yerevan, Republic of Armenia
Tel: 060-38-00-01

МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ
И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО “ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084, Республика Армения, город Ереван, ул.3. Андраника 1
Тел: 060-38-00-01, E-mail: hven@hven.am, www.hven.am

No. 02-19 / 01
«19» 01 2021թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԶԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/02» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության
2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին
ենթակետի «ա» և «գ» պարբերությունների և 26-րդ կետի պահանջները, ինչպես նաև
ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի «թ» ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝
Ընկերություն) կարիքների համար «Արմփատեր» փակ բաժնետիրական ընկերության
կողմից կառուցվող համակցված ցիկլով շոգեգազային էլեկտրակայանի (ՀՇԳՑ-2) 250
ՄՎԱ հզորությամբ 220կՎ ենթակայանը «Նաիրի» 220 կՎ լարման էլեկտրահաղորդման
օդային գծի մուտք-ելք սխեմայով հաղորդման ցանցին միացնելու համար օդային գծերի
կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծել «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/02»
ծածկագրով գնահատող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ համաձայն
հավելվածի:

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Ընկերության գնումների և
մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ Դ. Գասպարյանին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր
տնօրենի տեղակալին (Վ.Մարտիրոսյանին):

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր»

փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի
2021 թվականի հունվարի 19-ի N 02-Ն հրամանի

«ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/02» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

- Ա. Մելքոնյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության վերահսկման և գույքի կառավարման բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)
- Ա. Ասատրյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության տեխնիկական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)
- Ա. Հովսեփյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության վերահսկման և գույքի կառավարման բաժնի ճարտարագետ - նախագծող (ԳՊ/ԳԱ)
- Ս. Վարդապետյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության վերահսկման և գույքի կառավարման բաժնի տեխնիկական հսկիչ (ԳՊ/ԳԱ)
- Վ. Գարեգինյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)
- Գ. Խաչոյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ (ԳՊ/ԲԱ)



ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ